



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 001-Ա

13-ը Հունվարի 2017թ.

գ. Վարդաձոր

Վարդաձոր համայնքի 05-084-0104-0229 կադաստրային ծածկագրով էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների 0.0083հա հողատարածքը հասցեավորելու մասին:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումով՝

Որոշում եմ՝

1. Համայնքի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն համարվող 05-084-0104-0229 կադաստրային ծածկագրով, էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների 0.0083հա հողատարածքին հատկացնել Քարազլուխ 3 հասցեն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձոր համայնքի ղեկավար՝



Ռ. Սիրականյան



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 002

13-ը Հունվարի 2017թ.

գ. Վարդաձոր

2017թ. ապրիլի 2-ին կայանալիք հերթական ընտրությունների համար քարոզչություն կատարելու նպատակով անվճար հիմունքներով դահլիճ տրամադրելու մասին:

Ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին և 18-րդ հոդվածի առաջին կետերի պահանջներով.

Որոշում եմ՝

1. Համայնքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017թ. ապրիլի 2-ին կայանալիք հերթական ընտրությունների քարոզչություն կատարողներին անվճար հիմունքներով տրամադրել Վարդաձորի մշակույթի տան դահլիճը 300 տեղ: Հասցեն գ. Վարդաձոր, Ալաշկերտի փողոց տուն 16:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձոր համայնքի ղեկավար՝



Ռ. Սիրականյան



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐՂԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 003

13-ը Հունվարի 2017թ.

գ. Վարդաձոր

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի բնակիչ Համազասպ Սերյոժայի Գրիգորյանին պատկանող 05-084-0009-0011 կադաստրային ծածկագրով 0.1614 հա մակերեսով տնամերձ հողամասին իրավաբանական հասցե տրամադրելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, համաձայն ՀՀ Կառավարության 20.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ.

Որոշում եմ՝

1. Հ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի բնակիչ Համազասպ Սերյոժայի Գրիգորյանին պատկանող 05-084-009-011 կադաստրային ծածկագրով 0.161 հա մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել գ.Վարդաձոր 22 փողոց թիվ 2/1 հասցեն:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ՝



Ռ. Սիրականյան



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 004

13-ը Հունվարի 2017թ.

գ. Վարդաձոր

Վարդաձոր գյուղի 22-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 10 հասցեի 05-084-0011-0003 ծածկագրով հողամասի և շենք շինությունների նկատմամբ Համազասպ Սերյոժայի Գրիգորյանի ընտանիքի գույքային իրավունքները վերականգնելու մասին:

Հաշվի առնելով, որ շինությունը կառուցվել է մինչև 2000թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նշված տարածքներում: Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 2008թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով.

Որոշում են՝

1. Վերականգնել վերը նշված հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Համազասպ Սերյոժայի Գրիգորյանի ծնվ. 04.03.1957թ., Թամարա Գարսևանի Գրիգորյանի ծնվ. 03.05.1957թ., Նովկետ Համազասպի Գրիգորյանի ծնվ. 05.10.1979թ., Սիրարփի Համազասպի Գրիգորյանի ծնվ. 08.09.1981թ. և Օգսեն Համազասպի Գրիգորյանի ծնվ. 15.01.1984թ. հողօգտագործման իրավունքը, շինության զբաղեցրած տարածքի և սպասարկման համար անհրաժեշտ 0,3228 հա հողամասի և դրա վրա կառուցված շենք շինությունների՝ բնակելի տան նկուղ 102.52քմ, բնակելի տուն 160.02քմ, բաց պատշգամբ 5.88քմ, գոմ հացատուն 63.17քմ, ավտոտնակ 66.12քմ, պարիսպ 7.30քմ, պարիսպ 6.51քմ-ի նկատմամբ:

2. Շենք շինությունների մակերեսները ենթակա չեն ճշտման ԱԳԿ Մարտունու տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի քաղաքաշինության մասնագետի կողմից տրված հատակագծով:

4. Շինությանը տրամադրել 22-րդ փողոց 2-րդ նրբանցք թիվ 10 հասցեն:

5. Առաջարկել ԱԳԿ Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանմանը գրանցել Համազասպ Սերյոժայի Գրիգորյանի ընտանիքի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք շինությունների նկատմամբ և տրամադրել սեփականության իրավունքի գրանցման վկայական:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձոր համայնքի ղեկավար՝



Ռ. Սիրականյան